



**Brot**  
für die Welt

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՉԱՓՈՐՈՇԻՉԸ ՀՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑՈՂ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Գորիս  
2021



**Brot**  
für die Welt

Մույն զեկույցը պատրաստվել է Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի Մյունխի մասնաճյուղի կողմից: Նրանում տեղ գտած տեսակետները և վերլուծությունը արտահայտում է հեղինակի կարծիքը, որը կարող է չհամընկնել Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի տեսակետների և դիրքորոշումների հետ:

**Զեկույցի հեղինակ՝**

Սոնա Ալավերդյան

**Մշտադիտարկման հաշվետվություն / Հանրակրթության պետական չափորոշիչը ՀՀ հանրակրթական համակարգում տեղի ունեցող փոփոխությունների համատեքստում.- Գորիս, 2021, 13 էջ:**

## Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	3
ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ .....	4
1. ՀԱՎԵԼՎԱԾ N 1. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԳ .....	4
2. ՀԱՎԵԼՎԱԾ N 2. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻ 2.....	6
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	12
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	13

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտության շրջանակում դիտարկվել են Հայաստանի Հանրապետությունում հանրակրթության ոլորտի իրավական փոփոխությունները՝ նկատի ունենալով **Հանրակրթության պետական չափորոշում** փոփոխություններ կատարելու մասին կառավարության 2021 թ. փետրվարի 4-ի N 136-Ն որոշումը:

Հանրակրթության պետական չափորոշիչը հանրակրթության որակի ձևավորման և ապահովման կրթական քաղաքականությունն արտացոլող փաստաթղթերից<sup>1</sup> մեկն է, որի նոր տարբերակն ընդունվել է 2021 թ. փետրվարի 4-ին: Այն հանդես է եկել որպես 2010 թվականի ապրիլի 8-ի «Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 771-Ն և հունիսի 17-ի N 900-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»<sup>2</sup> N 439-Ն որոշման NN 1 և 2 հավելվածների՝ նոր խմբագրությամբ շարադրանք:

Կարևորելով վերանայված փաստաթղթի մասին հստակ պատկերացում կազմելու անհրաժեշտությունը՝ սույն հետազոտությունը **նպատակ ունի ուսումնասիրելու** Հանրակրթության պետական նոր չափորոշիչը և ներկայացնելու առանցքային փոփոխությունները նախկին չափորոշիչի հետ համեմատության համատեքստում:

Ելնելով հետազոտության նպատակից՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. **ուսումնասիրել** նոր չափորոշիչի կառուցվածքային ու բովանդակային առանձնահատկությունները, հիմնական փոփոխությունները,

---

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետությունում հանրակրթության ոլորտի իրավական կարգավորումն իրականացվում է հետևյալ փաստաթղթերով.

- «Կրթության մասին» ՀՀ օրենք,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք,
- Հանրակրթության պետական կրթակարգ,
- Հանրակրթության պետական չափորոշիչ
- Հանրակրթական առարկաների չափորոշիչներ և ծրագրեր,
- ՀՀ ԿԳՆ կողմից երաշխավորված մեթոդական ցուցումներ և ձեռնարկներ, իրավական այլ ակտեր:

<sup>2</sup> Այն փոփոխվել է ՀՀ կառավարության 2011 թ. հուլիսի 28 N 1088-Ն որոշմամբ, որի համաձայն ուժը կորցրած է ճանաչվել որոշման N 1 հավելվածի 4-րդ կետը, իսկ որոշման N 2 հավելվածը շարադրվել է նոր խմբագրությամբ:

2. **կատարել** ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն և 2021 թ. փետրվարի 4-ի N 136-Ն որոշումների NN 1 և 2 հավելվածների համեմատական վերլուծություն:

Նկատի ունենալով հետազոտության **օբյեկտը** (ՀՀ հանրակրթության ոլորտի իրավական փոփոխությունները) և **առարկան** (ՀՀ հանրակրթության պետական չափորոշիչի հին և նոր տարբերակները)՝ հետազոտական խնդիրների բացահայտման համար անհրաժեշտ տեղեկությունը ստացվել է **փաստաթղթերի վերլուծության մեթոդի** միջոցով: Ուսումնասիրվել են Հանրակրթության պետական նախկին և նոր չափորոշիչները:

## **ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Այս մասում կքննարկվեն Հանրակրթության պետական նախկին և նոր չափորոշիչների կառուցվածքը, ըստ ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշման և ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշման **հավելվածներ N 1-ի** և **N 2-ի**<sup>3</sup> բաժինների, և յուրաքանչյուր բաժնում արտացոլված բովանդակությունը:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը ներկայացված է՝ համաձայն հետազոտական նպատակի և խնդիրների: Հետազոտությունն իրականացվել է՝ ըստ փաստաթղթերի վերլուծության արդյունքների:

### **1. ՀԱՎԵԼՎԱԾ N 1. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԳ**

#### **I. Ընդհանուր դրույթներ**

Այս բաժնում ամրագրված են փաստաթղթի կանոնակարգման օբյեկտները: Հիմնական փոփոխությունն այս առումով այն է, որ Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման նախկին կարգով կանոնակարգվում էին միայն Հանրակրթության պետական չափորոշիչի և առարկայական չափորոշիչների

---

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ կառավարության 2010 թ. ապրիլի 8-ի N 439-Ն որոշում, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=57923> (մուտք՝ 06.12. 2021), ՀՀ կառավարության 2021 թ. փետրվարի 4-ի N 136-Ն որոշում, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788>, (մուտք՝ 06.12. 2021): Այս և հաջորդ մեջբերումները վերցված են միևնույն աղբյուրներից:

ձևավորման ու հաստատման գործընթացները և Հայաստանի Հանրապետության հանրակրթության համակարգում դրանց ներդրման հետ կապված հարաբերությունները, ապա նոր տարբերակով սահմանվում է նաև առարկայական ծրագրերի ձևավորման ու հաստատման գործընթացը:

## **II. Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորումը**

Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման նախկին կարգում ձևավորման համար ներկայացված են հանրակրթական հիմնական ծրագրերի հետևյալ բաղադրիչները՝

- 1) ուսումնական բնագավառներն ու կրթության բովանդակության բաղադրիչներ,
- 2) շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջներ՝ ըստ կրթության աստիճանների և ուսումնական բնագավառների,
- 3) հենքային ուսումնական պլան և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքներ,
- 4) սովորողների գնահատման ձևեր, սանդղակ, հաշվառման կարգ:


Վերոնշյալ բաղադրիչներից նոր կարգում փոփոխվել է միայն երկրորդը: Համաձայն այդ փոփոխության՝ շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները ներկայացված են՝ ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ (կոմպետենցիաներ) և կրթական աստիճանների ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքներ): Դա նշանակում է, որ նոր կարգում կրթության բովանդակության ձևավորման հիմքում ներդրվել է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումը:

## **III. Հանրակրթության պետական չափորոշիչի և առարկայական չափորոշիչների և ծրագրերի հաստատումը**


Այս բաժնի միակ տարբերությունը նախորդի համեմատ այն է, որ եթե նախկին կարգով չէր խոսվում առարկայական ծրագրերի հաստատման մասին, ապա նոր կարգով հստակեցված է դրանց հաստատման համար պատասխանատու կառույցի հարցը, որն է՝ ՀՀ կրթության պետական կառավարման լիազոր մարմինը:

## 2. ՀԱՎԵԼՎԱԾ N 2. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

### Հանրակրթության պետական հին չափորոշի կառուցվածքը



### Հանրակրթության պետական նոր չափորոշի կառուցվածքը



#### I. Ընդհանուր դրույթներ

Նոր չափորոշի ամենագլխավոր փոփոխությունն այն է, որ այն ելնում է կարողունակահեն մոտեցումից և սահմանում է շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ (կոմպետենցիաներ) և ըստ կրթական աստիճանների ուսումնառության՝ ակնկալվող

վերջնարդյունքներ), ուսումնական բնագավառները, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները, հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսումնական պլանի և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները, սովորողների գնահատման ձևերը, սանդղակը, հաշվառման կարգը: Ընդ որում, կարողունակությունների սահմանման համար հիմք են հանդիսացել Եվրոպայի խորհրդի կողմից առաջադրված *Ժողովրդավարական մշակույթի կոմպետենցիաները* (CDC)<sup>4</sup>:

Նշենք, որ առհասարակ կրթական նյութերի, չափորոշիչների, կրթական ծրագրերի մշակման և կրթության գործընթացների կազմակերպման տարբեր մոտեցումներ կան, որոնցից են գիտելիքների վրա հիմնված, ուսուցման նպատակների վրա հիմնված, կարողունակությունների վրա հիմնված և այլ սկզբունքները: Եվ եթե նախկին չափորոշիչը **հենվում էր բացառապես իմացական գիտելիքի վրա, ինչը չէր խթանում** սովորողների «բարձր մտածողության» հմտությունների և կարողությունների զարգացումը, ապա կարողունակությունների վրա հիմնված կրթությունը կարող է լուծել այս խնդիրն ու նպաստել նրան, որ գիտելիքը դառնա սովորողի անձնային որակներ և հմտություններ ձևավորող ու զարգացնող գործիք:

## **II. Միջնակարգ կրթության շրջանավարտի ակնկալվող կարողունակությունները և հանրակրթական հիմնական ծրագրերի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները**

Քանի որ կարողունակահեն մոտեցումը նորություն է Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման համար, հասկանալի է, որ այս բաժինը նախորդ չափորոշչում բացակայում է: Այստեղ սահմանված է «կարողունակություն» հասկացությունը. «Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված **գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների** (ընդգծումը մերն է – Ս. Ա.) հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են»: Փաստաթղթով ամրագրված է, որ միջնակարգ կրթության եռաստիճան համակարգով կրթության

<sup>4</sup>«Ժողովրդավարական մշակույթի կոմպետենցիաներ» մոդելի մեջ ներառված են 20 կոմպետենցիաներ:



կազմակերպմամբ (տարրական, հիմնական, միջնակարգ) սովորողի մոտ պետք է ձևավորվեն 8 կարողունակություններ՝

- 1) լեզվական գրագիտություն և կարողունակություն,
- 2) սովորել սովորելու կարողունակություն,
- 3) ինքնաձանաչողական և սոցիալական կարողունակություն,
- 4) ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն,
- 5) թվային և մեդիա կարողունակություն,
- 6) մշակութային կարողունակություն,
- 7) մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն,
- 8) տնտեսական կարողունակություն:

Ընդհանրապես կարողունակաին կրթակարգերն ունեն մի քանի առանձնահատկություններ.

- 1) կարողունակաին կրթությունը կարևորում է ոչ թե առանձին, կոնկրետ որակները, այլ դրանց որոշակի համախումբը,
- 2) կրթության բովանդակությունը ձևավորվում է կարողունակությունների հենքի վրա, այլ ոչ թե առանձին առարկաների, ինչը ենթադրում է, որ իբրև վերջնարդյունք կարևորվում է ոչ թե առանձին առարկաների յուրացումը, այլ կարողություններից ձևավորումը,
- 3) առարկաները դիտվում են որպես գործիք առավել ընդհանրական որակներ ձևավորելու համար,
- 4) կարողունակություններից յուրաքանչյուրի ձևավորվմանը մասնակցում է ոչ թե մեկ առարկա, այլ ողջ առարկայախումբը,
- 5) ուսումնական գործընթացը հնարավորինս նպաստում է սովորողի այն որակների ձևավորմանը, որոնց նա առնչվում է իր առօրյա և աշխատանքային գործունեությունը կազմակերպելիս:

**III, IV, V. Հանրակրթական տարրական, հիմնական և միջնակարգ ծրագրերի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները**

Նախկին չափորոշչում տրված չեն ուսումնառության վերջնարդյունքներ, որոնք պետք է ուղղորդեն առարկայական ծրագրերի մշակմանը: Պարզապես առկա են սովորողին ներկայացվող նվազագույն պարտադիր պահանջները՝ ըստ կրթական

աստիճանի և ուսումնական բնագավառների մասնավորման: Ի տարբերություն նախկին տարբերակի, նոր չափորոշչում մանրամասն ներկայացված են շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները՝ ըստ միայն կրթական աստիճանի մասնավորման: Ուսումնական բնագավառներով մասնավորված վերջնարդյունքներ չներկայացնելը ենթադրաբար բխում է կրթության բովանդակության ձևավորման հիմքում ներդրված կարողունակահեն մոտեցումից, որը կարևորում է ոչ թե այն գիտելիքներն ու կարողությունները, որոնք պետք է սովորողը ձեռք բերի առանձին առարկաների ուսումնասիրության արդյունքում, այլ այն հիմնական, առանցքային կարողունակությունները, որոնց պետք է տիրապետի սովորողը իր կրթական խնդիրները լուծելու համար:

Հարկ է նշել, որ նոր չափորոշչում վերջնարդյունքները սահմանելու համար կիրառվել է միջազգայնորեն ընդունված կրթական գործիք՝ Բլումի վերանայված դասաբանությունը:

#### **VI. Հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակությունը**

Նոր չափորոշչի այս բաժնում խոսվում է հանրակրթության բովանդակության 4 բաղադրիչի մասին՝ գիտելիք, հմտություն, դիրքորոշում, արժեք: Կարևոր է ընդգծել, որ այստեղ տրված է հստակ պատկերացում «ուսումնական բնագավառ» հասկացության մասին, ինչը բացակայում է և՛ Հանրակրթության մասին ՀՀ օրենքում, և՛ նախկին չափորոշչում: Ընդ որում, նախորդ չափորոշչում սահմանման բացակայությունը խնդրահարույց էր այն պատճառով, որ այնտեղ մատնանշվում էին ուսումնական բնագավառները, և հասկանալի չէին, թե ինչ սկզբունքով են առանձնացված այդ բնագավառները, և դրանց նպատակաուղղվածությունները ինչպես են փոխառնչվում:

Նախորդ չափորոշչում ուսումնական հետևյալ բնագավառներն են առանձնացված.

- 1) հայոց լեզու, գրականություն,
- 2) օտար լեզուներ,
- 3) մաթեմատիկա,
- 4) տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ (այսուհետ՝ ՏՀՏ),  
համակարգչային գիտություններ,

- 5) բնություն, բնական գիտություններ,
- 6) հասարակություն, հասարակական գիտություններ,
- 7) արվեստ,
- 8) տեխնոլոգիա,
- 9) Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն:

Նոր չափորոշում, սակայն, հաշվի առնելով ուսումնական բնագավառի առաջարկվող սահմանումը՝ վերոնշյալները վերաձևակերպվել են, վերախմբավորվել, քանակն է պակասեցվել, և այդ ամենի հետևանքով առանձնացվել են հետևյալները.

- 1) Հայոց լեզու և գրականություն,
- 2) Հայրենագիտություն,
- 3) Օտար լեզուներ,
- 4) Բնագիտություն, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն, մաթեմատիկա (FS&U),
- 5) Հասարակություն, հասարակական գիտություններ,
- 6) Արվեստ և արհեստ,
- 7) Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն:

## **VII. Հանրակրթական ծրագրերի հենքային ուսումնական պլանը**

Չափորոշի հին տարբերակի հանրակրթական ծրագրերի հենքային ուսումնական պլանը ներառում է առարկայացանկը, ներկայացված են առարկայացանկի ձևավորման հիմնական սկզբունքները: Դրա փոխարեն, սակայն, նոր տարբերակն ընդգրկում է միայն ուսումնական բնագավառները: Նոր տարբերակում, ի տարբերություն նախորդի, բացակայում են նաև ուսումնական բնագավառներին հատկացված տարեկան նորմատիվային ժամաքանակները: Դրանք արտահայտված են տոկոսնայնությամբ: Այս փոփոխությունը միտված է դպրոցների ինքավարության մեծացմանը:

Նոր չափորոշով ուսումնական պլանը ներառում է երկու բաղադրիչ՝ պետական և դպրոցական: Նորությունն այստեղ կապված է դպրոցական բաղադրիչի հետ, որում ներառվել է նաև խմբակներին և նախագծերին հատկացվող բաղադրիչը՝ սովորողի ընտրությամբ: Կարևոր է ընդգծել այն հանգամանքը, որ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում ընտրովի բաղադրիչի

Ֆինանսավորումը ներառված է: Հանուն արդարության նշենք, որ թեև այս փոփոխությունը միտված է կրթության մեջ սովորողի՝ իբրև անհատի դերի բարձրացմանը, նրա կարիքները, ցանկություններն ու հետաքրքրությունները հաշվի առնելուն, սակայն դեռևս անորոշ են այդ ամենին արձագանքելու եղանակներն ու մոտեցումները:

#### **IX. Սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման սկզբունքները**

Այս առումով առաջին փոփոխությունն առնչվում է ուսումնառության արդյունքների գնահատման նպատակին: Հին տարբերակում գնահատումը նպատակ ուներ որոշելու սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակի համապատասխանության աստիճանը չափորոշչի պահանջներին, խթանելու սովորելու ձգտումը, բարելավելու կրթության որակը: Իսկ ահա նոր չափորոշչում այն նպատակ ունի որոշելու սովորողի մոտ կարողունակության զարգացման աստիճանը՝ ըստ ուսումնական առարկաների չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների և հմտությունների մակարդակի, ինչպես նաև դիրքորոշումների ու արժեքների ձևավորման:

Ե՛վ հին, և՛ նոր տարբերակներում գնահատման եղանակները երկուսն են՝ ընթացիկ և ամփոփիչ: Փոփոխություն չկա նաև գնահատման ձևերի ընտրության հարցում. շարունակվում են ընդունելի լինել գնահատման երեք ձևեր՝ ձևավորող (ուսուցանող), միավորային (քանակական) և բնութագրող: Տարբերություն նկատվում է, սակայն, այդ ձևերի կիրառման առումով: Այսպես, եթե նախկինում միավորային գնահատումը կիրառվում էր՝ սկսած երկրորդ դասարանից, ապա նոր տարբերակով նախատեսվում է գնահատման այս ձևն օգտագործել՝ սկսած 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակից: Այս ամենից ենթադրվում է, որ նոր չափորոշչով մեծանում է ձևավորող գնահատման դերը:

Նշանակալի հաջորդ փոփոխությունը կապված է քանակական գնահատման միավորային սանդղակի կիրառման հետ: Նախկինում բավարար էր համարվում «4» թվանշանից սկսածը, բայց նոր չափորոշիչը հրաժարվում է բացասական կամ անբավարար միավորային շեմից: «10 միավորային սանդղակում որևէ թիվ չի հանդիսանում անբավարար գնահատական, և յուրաքանչյուր նիշ նկարագրում է

աշակերտի հաջողության որևէ մակարդակ: Քանակական գնահատումը ցույց է տալիս աշակերտի ուսումնական հաջողությունները, սկսվում 1 միավորից և չունի անբավարար սանդղակ», - նշված է այս բաժնի 39 կետում:

Բնութագրող գնահատման դերը ևս նոր չափորոշչով մեծացվել է: Նախկին չափորոշչով այն՝ իբրև ամփոփիչ գնահատման ձև, կիրառվում էր միայն առաջին դասարանում. որպես տարեկան ամփոփիչ գնահատական կազմվում էր յուրաքանչյուր սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը, որի ձևը և լրացման կարգը սահմանում էր կրթության պետական կառավարման լիազորված մարմինը: Այժմ նախատեսվում է սովորողի ուսումնական ձեռքբերումների բնութագրման միջոցով ամփոփիչ գնահատումն իրականացնել տարրական դպրոցում՝ 1-4-րդ դասարաններում:

Կարևոր փոփոխություններից է 7-12-րդ դասարաններում նախագծային ուսուցման պարտադիր պահանջի ամրագրումը, ըստ որի՝ յուրաքանչյուր աշակերտ տարեկան իրականացնում է առնվազն ուսումնական մեկ նախագիծ՝ իր ընտրած առարկայից կամ առարկաներից: Այս փոփոխությունը դարձյալ պայմանավորված է չափորոշչի որդեգրած կարողունակահեն մոտեցումամբ:

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Հայաստանի հանրակրթության ոլորտում իրականացվել և իրականացվում են հավակնոտ փոփոխություններ, որոնք միտված են ոլորտի հիմնախնդիրների լուծմանն ու կրթության արդյունավետ կազմակերպմանը:
2. Այնուամենայնիվ, այդ ամենը բազմաթիվ մարտահրավերներ է նետում ողջ համակարգին: Հատկապես բավական անորոշ է, թե ինչպես է հնարավոր լինելու ապահովել գիտելիքահեն կրթությունից կարողունակահեն մոտեցման անցումը:
3. Կարողունակահեն կրթության հաջող իրականացման հարցում էական դերակատարություն ունեն ուսուցիչները, հետևաբար կարիք կա հասկանալու, թե ինչպես, ինչ եղանակով է հնարավոր նրանց նախապատրաստել այս փոփոխություններին: Իբրև արդյունավետ միջոց առաջարկվում է

ուսուցիչների համար կազմակերպել վերապատրաստման դասընթացներ, որոնք կլինեն ոչ թե կարճաժամկետ, այլ երկարատև:

4. Կարողունակահեն կրթության կյանքի կոչման համար պակաս կարևոր չեն կրթության բովանդակության կառուցմանը մասնակցող այն փաստաթղթերն ու ուսումնամեթոդական նյութերը, որոնք բխում են Հանրակրթության պետական չափորոշից: Խոսքը, մասնավորապես, առարկայական նոր չափորոշիչների և ծրագրերի (առարկայական նոր՝ նախագծային չափորոշիչներն ու ծրագրերը այժմ փորձարկվում են Տավուշի մարզի բոլոր դպրոցներում), դասագրքերի, ուսուցիչների ձեռնարկների և ուսումնական պլանների մասին է: Ուստի մեր առաջարկն այս հարցում այդ ամենի վերանայումն է, բայց ոչ թե վերևից ներքև, այլ ներքևից վերև սկզբունքով: Այդ սկզբունքը կիրառելու համար ցանկալի է գործընթացներին մասնակից դարձնել հայաստանյան հանրակրթական բոլոր հաստատությունների ուսուցիչներին՝ ոչ թե արդեն իսկ իրականություն դարձած փոփոխությունների մասին իրազեկելու, այլ նրանց իսկ գործունե մասնակցությամբ փոփոխությունների հասնելու համար (օրինակ՝ առարկայական չափորոշիչների, ծրագրերի, ուսումնամեթոդական նյութերի մշակում, վերանայում):

#### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

1. ՀՀ կառավարության 2010 թ. ապրիլի 8-ի N 439-Ն որոշում, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=57923> (մուտք՝ 06.12. 2021):
2. ՀՀ կառավարության 2021 թ. փետրվարի 4-ի N 136-Ն որոշում, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788>, (մուտք՝ 06.12. 2021):